ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«22» 04 2024թ. Թիվ 109-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի ԹԻՎ 55-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 55-Լ հրամանի ողջ տեքստում «ծառայող» և «ծառայողներ» բառերն իրենց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ» և «ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք» բառերով՝ բացառությամբ հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կանոնադրության (այսուհետ՝ կանոնադրություն) 11.1-ին կետի 16-րդ ենթակետի:

2. Կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) կանոնադրության 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Կոմիտեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:».

2) կանոնադրության 7-րդ կետից հանել «, ի դեմս Կոմիտեի դեպարտամենտի,» բառերը.

3) կանոնադրության 10-րդ կետի 15-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) նշանակում, ազատում, խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում Կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նաև Կոմիտեի քաղաքացիական ծառայողներին, ինչպես նաև պարգևատրում է Կոմիտեի գործունեությանն օժանդակող այլ պետական մարմինների (այդ թվում՝ օտարերկրյա) պաշտոնատար անձանց, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին, քաղաքացիներին, կազմակերպություններին.».

4) կանոնադրության 36-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«36. Կոմիտեի կենտրոնական մարմնի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պարտականություններն են՝

1) նախաքննության կազմակերպման ոլորտում իրականացնել Կոմիտեի Երևան քաղաքի և մարզային քննչական վարչությունների, դրանց ստորաբաժանումների գործունեության վերահսկողություն.

2) Կոմիտեի Երևան քաղաքի և մարզային քննչական վարչությունների, դրանց ստորաբաժանումների պետերի կողմից քրեական վարույթներով դատավարական իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունավետությունը գնահատելու և գործնական օգնություն ցուցաբերելու նպատակով իրականացնել ուսումնասիրություններ.

3) Կոմիտեի նախագահի կամ նախագահի՝ ոլորտը համակարգող տեղակալի հանձնարարությամբ ուսումնասիրել քրեական վարույթներ և ներկայացնել զեկույց՝ նախաքննության արդյունավետ կազմակերպման և իրականացման վերաբերյալ.

4) ուսումնասիրել Կոմիտեի Երևան քաղաքի և մարզային քննչական վարչությունների, դրանց ստորաբաժանումների վարույթում քննվող առանձնակի բարդություն, հասարակական հնչեղություն ունեցող, առանձնապես ծանր հանցագործությունների այն դեպքերով, որոնցով պարզված չէ քրեական հետապնդման ենթակա անձը, ինչպես նաև քրեական հետապնդման ժամկետները երկարացված քրեական վարույթները՝ նախաքննության ընթացքում հնարավոր քրեադատավարական խախտումները բացառելու, առկայության դեպքում ի հայտ բերելու, ինչպես նաև ըստ անհրաժեշտության գործնական օգնություն ցուցաբերելու նպատակով.

5) քննարկել դիմումները, հարցումները և բողոքները պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից ստացված գրությունները, միջնորդությունները, հաղորդումները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ դրանք ուղարկել վարույթն իրականացնող մարմնի քննարկմանը.

6) Կոմիտեի Երևան քաղաքի և մարզային քննչական վարչություններում, դրանց ստորաբաժանումներում քննվող քրեական վարույթներին առնչվող դիմում-բողոքներում, միջնորդություններում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից ստացված գրություններում նշված հանգամանքները ստուգելու նպատակով ուսումնասիրել քրեական վարույթները՝ նախաքննության ընթացքում թույլ

տրված հնարավոր քրեադատավարական խախտումներն ի հայտ բերելու, ինչպես նաև ըստ անհրաժեշտության գործնական օգնություն ցուցաբերելու նպատակով.

7) ուսումնասիրել Կոմիտեի Երևան քաղաքի և մարզային քննչական վարչություններում, դրանց ստորաբաժանումներում մեկ տարուց ավել քննվող քրեական վարույթները, որոնցով իրականացվում է հանրային քրեական հետապնդում կամ հայտնի է առերևույթ հանցանք կատարած անձի ինքնությունը՝ նախաքննության ձգձգման պատճառները պարզելու և ըստ անհրաժեշտության գործնական օգնություն ցուցաբերելու նպատակով.

8) վերահսկողություն իրականացնել Կոմիտեի Երևան քաղաքի և մարզային քննչական վարչությունների, դրանց ստորաբաժանումների ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Կոմիտեի նախագահի կամ նախագահի՝ ոլորտը համակարգող տեղակալի՝ նախաքննության կազմակերպման և իրականացման ոլորտին առնչվող հրամանների և հանձնարարականների կատարման նկատմամբ.

9) հսկողություն իրականացնել Կոմիտեի Երևան քաղաքի և մարզային քննչական վարչությունների, դրանց ստորաբաժանումների ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից արդյունավետ նախաքննության իրականացման համար օրենսդրությամբ նախատեսված իրավական գործիքակազմի գործարկումն ու միատեսակ կիրառումն ապահովելու նկատմամբ.

10) սույն կետի 9-րդ ենթակետով նախատեսված գործառույթների իրականացման ընթացքում առաջացած խնդիրների լուծման նպատակով առաջարկություններ ներկայացնել Կոմիտեի նախագահին՝ դրանց լուծմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես գալու կամ ներքին իրավական ակտերի ընդունման կապակցությամբ.

11) հսկողություն իրականացնել Կոմիտեի Երևան քաղաքի և մարզային քննչական վարչությունների, դրանց ստորաբաժանումների միջև փոխգործակցությունը, քննչական փոխօգնության խնդրանքների ժամանակին և պատշաճ կատարումն ապահովելու նկատմամբ.

12) Կոմիտեի նախագահի կամ Կոմիտեի նախագահի՝ ոլորտը համակարգող տեղակալի հանձնարարությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ իրականացնել այլ գործառույթներ:».

5) կանոնադրության 38.1-ին կետի 5-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

6) կանոնադրության 38.1-ին կետի 9-րդ ենթակետը «պատասխանների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև դատական ներկայացուցչության հետ կապված այլ փաստաթղթերի» բառերով.

7) կանոնադրության 39-րդ կետի 1-ին ենթակետում «օպերատիվ կատարումը» բառերը փոխարինել «կատարումը Կոմիտեի հիմնական մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով».

8) կանոնադրության 39-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) կազմակերպում և վերահսկում է Կոմիտեում քննվող քրեական վարույթներով իրավական օգնություն ցույց տալու մասին օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին հարցումներ ուղարկելու գործընթացը.».

9) կանոնադրության 39-րդ կետի 4-րդ ենթակետում «համագործակցության հարցերով» բառերից հետո լրացնել «Կոմիտեի գործունեությանն առնչվող» բառերը.

10) կանոնադրության 39-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) ապահովում է օտարերկրյա պետությունների քննչական մարմինների, իրավապահ մարմինների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության իրականացումը.».

11) կանոնադրության 39-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին ենթակետով.

«5.1) միջազգային համագործակցության շրջանակներում կազմակերպում և համակարգում է Կոմիտեի գործունեությանն առնչվող համաժողովներ, սեմինարներ և այլ միջոցառումներ.».

12) կանոնադրության 39-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.2-րդ կետով.

«8.2) իրականացնում է Կոմիտեի և օտարերկրյա պետությունների քննչական, իրավապահ մարմինների, միջազգային կազմակերպությունների միջև կնքված միջազգային հուշագրերի, ծրագրերի կամ այլ փաստաթղթերի պահպանությունը, առաջարկություններ է ներկայացնում դրանցով սահմանված կարգավորումների կատարելագործման, ինչպես նաև միջազգային համագործակցության շրջանակներում այլ փաստաթղթեր մշակելու անհրաժեշտության վերաբերյալ.».

13) կանոնադրության 41-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 461-468-րդ, 516-550-րդ հոդվածներով, ինչպես նաև զորամասի տարածքում կատարված կամ ժամկետային զինվորական ծառայության զինծառայողներին կամ պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնում և կազմակերպություններում (որոնց բաժնետոմսերի կառավարման լիազորությունը հանձնված է պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմնին) ծառայություն իրականացնող անձանց վերագրվող առերևույթ հանցագործությունների վերաբերյալ դեպքերով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված լիազորությունները.».

14) կանոնադրության 45-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«45.Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վերահսկողության վարչության պարտականություններն են՝

1) իրականացնել սույն կանոնադրության 41-րդ կետով նախատեսված լիազորությունները.

2) նախաքննության կազմակերպման ոլորտում իրականացնել Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչության, կայազորային քննչական բաժինների գործունեության վերահսկողություն.

3) Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչության, կայազորային քննչական բաժինների պետերի կողմից քրեական վարույթներով դատավարական իրավունքների ու պարտականությունների իրականացման արդյունավետությունը գնահատելու և գործնական օգնություն ցուցաբերելու նպատակով իրականացնել ուսումնասիրություններ.

4) Կոմիտեի նախագահի կամ Կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետի հանձնարարությամբ ուսումնասիրել քրեական վարույթներ և ներկայացնել զեկույց՝ նախաքննության արդյունավետ իրականացման և կազմակերպման վերաբերյալ.

5) ուսումնասիրել Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչության, կայազորային քննչական բաժինների վարույթում քննվող առանձնակի բարդություն կամ հասարակական հնչեղություն ունեցող, առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով, որոնցով պարզված չէ քրեական հետապնդման ենթակա անձը, ինչպես նաև քրեական հետապնդման ժամկետները երկարացված քրեական վարույթները՝ նախաքննության ընթացքում հնարավոր քրեադատավարական խախտումները բացառելու, առկայության դեպքում ի հայտ բերելու, ինչպես նաև ըստ անհրաժեշտության գործնական օգնություն ցուցաբերելու նպատակով.

6) քննարկել դիմումները, հարցումները և բողոքները պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից ստացված գրությունները, միջնորդությունները, հաղորդումները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում դրանք ուղարկել վարույթն իրականացնող մարմնի քննարկմանը.

7) Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչությունում, կայազորային քննչական բաժիններում քննվող քրեական վարույթներին առնչվող դիմում-բողոքներում, միջնորդություններում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից ստացված գրություններում նշված հանգամանքները ստուգելու նպատակով ուսումնասիրել քրեական վարույթները՝ նախաքննության ընթացքում թույլ տրված հնարավոր քրեադատավարական խախտումներն ի հայտ բերելու, ինչպես նաև ըստ անհրաժեշտության գործնական օգնություն ցուցաբերելու նպատակով.

8) ուսումնասիրել Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչությունում, կայազորային քննչական բաժիններում մահվան ելքով դեպքերով նախաձեռնված քրեական վարույթները, ինչպես նաև մեկ տարուց ավել քննվող քրեական վարույթները, որոնցով իրականացվում է հանրային քրեական հետապնդում կամ հայտնի է առերևույթ հանցանք կատարած անձի ինքնությունը՝ նախաքննության ձգձգման պատճառները պարզելու և ըստ անհրաժեշտության գործնական օգնություն ցուցաբերելու նպատակով.

9) վերահսկողություն իրականացնել Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչության, կայազորային քննչական բաժինների ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից Կոմիտեի նախագահի, Կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետի՝ նախաքննության կազմակերպման և իրականացման ոլորտին առնչվող հրամանների և հանձնարարականների կատարման նկատմամբ.

10) հսկողություն իրականացնել Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչության, կայազորային քննչական բաժինների ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց կողմից արդյունավետ նախաքննության իրականացման համար օրենսդրությամբ նախատեսված իրավական գործիքակազմի գործարկումն ու միատեսակ կիրառումն ապահովելու նկատմամբ.

11) սույն կետի 10-րդ ենթակետով նախատեսված գործառույթների իրականացման ընթացքում առաջացած խնդիրների լուծման նպատակով առաջարկություններ ներկայացնել Կոմիտեի նախագահին՝ դրանց լուծմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես գալու կամ ներքին իրավական ակտերի ընդունման կապակցությամբ.

12) հսկողություն իրականացնել Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումների միջև փոխգործակցությունը, քննչական փոխօգնության խնդրանքների ժամանակին և պատշաճ կատարումն ապահովելու նկատմամբ.

13) Կոմիտեի նախագահի կամ Կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետի հանձնարարությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ իրականացնել այլ գործառույթներ:»:

3. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, մամուլի քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին:

Ա. ՔՅԱՐԱՄՅԱՆ